Հայ գրականություն

Մարզային փուլ

9-րդ դասարան /Տևողությունը 180 րոպե/

1. Ո՞վ է դպրության աստվածը հայոց դիցարանում: 0.5

- Ի՞նչ պատմական հեղաշրջում եղավ 405 թ. Հայաստան աշխարհում: 0.5
- Ո՞վ էր հեղաշրջման հեղինակը:0.5
- Ո՞ր մատենագրի ո՞ր աշխատության շնորհիվ է մեզ հասել նրա անընստգյուտ հայտնությունը: 1
- Ի՞նչ պատվանունով են մեծարել մատյանի հեղինակին: 0.5

2.Ինչպե՞ս է հեթանոս հայը պատկերացրել ամպրոպի ծնունդը:1

- Ո՞վ էր պատերազմի, քաջության և ամպրոպի աստվածը: 0.5
- Գրի՛ր բանաստեղծությունը (ցանկալի է գրաբար):1
- Ի՞նչ է կոչվում ներքին հանգերի ու բառերի և հնչյունների կրկնությունը:0.5
- Գրի՛ր օրինակներ՝ համանուն բանաստեղծությունից: 1

3. Ո՞րն է մեր ժողովրդի դյուցազներգությունը.0.5

ե՞րբ է ձևավորվել. 0.5

ո՞վքեր են առաջին հիշատակողները:0.5

- Ինչո՞վ են սկսվում «Սասնա ծռեր» էպոսի ճյուղերը:0.5
- Քո կարծիքով ինչո՞ւ է ժողովուրդը ընտրել հենց այդ եղանակը:1.5

- Աշխարհագրական ի՞նչ տեղանուններ կան էպոսում (գրի՛ր առնվազն հինգ օրինակ):1.5

4.Բնութագրի՛ր Սայաթ-Նովայի Գոգալին՝ ըստ «Աշխարումս ախ չիմ քաշի» երգի: 2

- Գրի՛ր առնվազն մեկ քառատող: 2

5. «Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ». ո՞վ է այս մտքի հեղինակը: 1

- Ո՞ր ստեղծագործությունը եղավ վերոգրյալի հաստատումը: 1
- Ի՞նչ ես հասկանում՝ վասն հայրենյաց մեռանիլ ասելով: 2

Հայ գրականություն

Մարզային փուլ

10-րդ դասարան /Տևողությունը 180 րոպե/

1.Ի՞նչ է վիպերգը.1

ինչո՞վ է տարբերվում առասպելից:1

- Ո՞ր վիպերգի հերոսն է և՛ աստված, և՛ թագավոր: Ի՞նչ վախճան ունեցավ այդ հերոսը:1
- Ո՞վքեր են հետագայում անդրադարձել այդ կերպարին և ինչպե՞ս: 1

2.Զրույց Փոքր Մհերի հետ՝արդիական թեմայով. ճշմարտություն և կեղծիք:

- Գրի՛ր նամակ, երկխոսություն կամ մենախոսություն: (4 միավոր)

3.Ո՞վ է առաջինը ստեղծագործել դիմառնության ճարտասանական ձևով. 0.5

ո՞րն է այդ ձևը: 1

Նշիր ստեղծագործության անունը:0.5

- Հետագայում էլ ո՞ր բանաստեղծն է անդրադարձել դրան: Նշի՛ր բանաստեղծին և ստեղծագործությունը: 1

4.Ո՞վ է այն բանաստեղծը, որ առաջինը համարձակորեն գովերգեց աշխարհիկ սերը: 1

- Գրական ի՞նչ ժանրով է ստեղծագործել. նշի՛ր անվանումը:1
- Գրի՛ր որևէ նմուշ, որտեղ իշխում է աշխարհիկ սիրո գաղափարը: 2

5. Ո՞վ է Կամիշինի վսեմական աքսորականը:0.5

- Ովքե՞ր են անդրադարձել նրա կերպարին. նշի՛ր հեղինակներին և ստեղծագործություն-ները:2
- Գրական ի՞նչ կեղծանունով է հանդես գալիս այդ գրողը:0.5

6. Ո՞ր բանասատեղծն է խոստովանել. «Ես երկնքի հիվանդությունն ունիմ»: 1

- Ո՞րն էր այդ բանաստեղծի վերջին բաղձանքը: 1

Հայ գրականություն
Մարզային փուլ

11-րդ դասարան /Տևողությունը 180 րոպե/

1.Ո՞ւմ են անվանել խոսքի Ռոբեսպիեր կամ հայոց Մոլիեր: 1

- Ո՞ր ստեղծագործության մեջ են ծաղրվում գրական մարդիկ: 1
- Արդիակա՞ն է արդյոք այս մոտեցումը:1

2. Ո՞րն է երջանիկ մահը՝ըստ Գրիգոր Զոհրապի: 0.5

- Ո՞ր ստեղծագործության մեջ է խոսվում այդ մասին:0.5
- Ո՞ր հերոսուհու խոսքերն են. «Կինը ծիծաղ մըն է. պետք չէ որ լացի փոխվի»:
- Ի՞նչ է համանուն նորավեպի հերոսուհու անունը: 1

3. Ո՞ր բանաստեղծության մեջ է Թումանյանը խտացնում հայ ժողովրդի անցած ճանապարհը: 0.5

- Գրի՛ր մեկ վեցնյակ:1
- Ի՞նչի հետ է համեմատում Թումանյանը հայոց վիշտը:0.5
- Ո՞ր բանաստեղծությունն է այդ վշտի խտացումը:0.5
- Գրի՛ ր առնվազն մեկ քառատող:1
- Ինչպիսի՞ ստեղծագործություն է քառյակը:0.5
- Ի՞նչ է ասել Թումանյանը քառյակի մասին:0.5
- Գրի՛ր քո նախընտրած քառյակը և մեկնաբանի՛ր: 0.5

4. Ի՞նչ պատվանուն ունի հայոց երգի նահապետ Ավետիք Իսահակյանը:0.5

- Ինչի՞ հիման վրա և ե՞րբ է ստեղծվել «Լիլիթ» լեգենդը:1
- Ինչո՞ւ է Լիլիթը մերժում Ադամի սերը:1
- Ո՞րն է դրախտի ամենահամեղ պտուղը՝ըստ Լիլիթի:0.5
- Ո՞ր ստեղծագործությունների մեջ է Իսահակյանը ներկայացնում հավերժական սիրո գաղափարը: 1

5. Ո՞վ է հետևյալ մտքի հեղինակը և ո՞ր ժողովածուի մասին է խոսքը. «Այժմ կը գրեմ «.....», որ հուսամ տարիե մը լույս կը տեսնե. այդ հատորին մեջ երգված պիտի ըլլան հայրենի հողը, մշակներու աշխատությունը և գյուղական կյանքի խաղաղ մեծությունները»: 1

- Կառուցվածքով ի՞նչ է հիշեցնում այդ ժողովածուն:1

•Գրի՛ր համանուն հեղինակի չքնաղ քերթվածը՝աշխատանքի և թախծալի սիրո մասին: 1

6. Ի՞նչ խորհրդանիշներ կան Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայում:1

- Որ հերոսներն են կանգնած նույն առեղծվածի առաջ. ո՞վ է նրանցից իրավացին:1
- Ո՞ր հերոսն է ավելի հոգեհարազատ քեզ և ինչո՞ւ /գրի՛ր 4-5 նախադասություն/:1

Հայ գրականություն

Մարզային փուլ

12-րդ դասարան /Տևողությունը 180 րոպե/

1. Հայ ո՞ր երկու բանաստեղծներն են տարբեր ժամանակներում անդրադարձել հայոց ճակատագրին՝ այն բնութագրելով նույն բառով:1

- Ո՞ր պատմական ողբերգությունն է ներկայացված այդ ստեղծագործություններում. ե՞րբ են գրվել:1.5
- Որոնման ճանապարհին ինչի՞ առասպելն է ցնդում՝ վերաճելով անամոք ցավի: 0.5

2. Ո՞վ է Ծմակուտի քուրմը: 0.5

Ովքե՞ր են եղել նրա գրական ուսուցիչները: 0.5

Կարո՞ղ ես զուգահեռներ անցկացնել նրանց ստեղծագործությունների միջև:1

- Բնութագրի՛ ր քո սիրելի հերոսին՝ նրանցից որևէ մեկի ստեղծագործությունից: 1

3. Մուշեղ Գալշոյանի ո՞ր հերոսն է ընդհանրացնում հայրենազուրկ հայերի կյանքը: 1

- Ե՞րբ է էկրանավորվել այդ գործը. ո՞վ է գլխավոր դերակատարը: 2

4. Ո՞ւմ խոսքերն են. «Աշխատեցեք կործանել այս ցեղը: Ենթադրենք, որ դարձյալ 1915թիվն է: Տեսեք, որ ցեղը դարձյալ պիտի չապրի՞....»:0.5

- Ինչպե՞ս կբացատրես այս միտքը:1
- Ի՞նչ է բացահայտում հեղինակը:0.5
- Ուրիշ ի՞նչ ստեղծագործություն գիտես այս հեղինակից: Եթե կարդացել ես, 4-5 նախադասությամբ ներկայացրո՛ւ: 1

5. Ո՞վ է «Մարդը ափի մեջ» ժողովածուի հեղինակը: 0.5

- Ո՞րն է այս ժողովածուի գաղափարը:1
- Ո՞ւմ նկատի ունի հեղինակը՝ ասելով «Դառնամ փառաբանեմ, փառաբանեմ մարդուն»:1.5

6. Ո՞ր բանաստեղծների «Կտակներին» ես ծանոթ:1

- Ի՞նչ են կտակում նրանք իրենց որդիներին:1
- Գրի՛ ր բանաստեղծական տողերը: 1

7. «Սա մի ահավոր, սպանիչ լինելու չափ ձգձգված, բայց շեքսպիրյան ողբերգություն է»:

- Ո՞ւմ տողերն են և ո՞ր ժամանակաշրջանն են բնութագրում:1
- Ուրիշ ինչ՞ գրողներ գիտես, որ զոհ գնացին այդ սպանիչ ողբերգությանը: 1